ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2019Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9-ԻՑ 10-Ը ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1.ԱՆՈՒՆԸ, ԱԶԳԱՆՈՒՆԸ

Արմեն Սիմոնյան

2.ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ

3.ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Ռուսաստանի Դաշնություն (ք. Մոսկվա), 2019թ. դեկտեմբերի 9-ից 10-ը:

4.ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ

Ռուսաստանի Դաշնության տրանսպորտի նախարարություն և «Ռուսական երկաթուղիներ» ԲԲԸ:

5.ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ (ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ Ո՞Ր ԽՆԴՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՒՂՈՒՄԸ)

Մասնակցություն երկաթուղու հարցերով հայ-ռուսական համատեղ աշխատանքային խմբի նիստին:

6.ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ

1. Երկաթուղային տրանսպորտում Կոնցենդենտի կողմից համաձայնեցված ծավալներով և ուղղություններով Կոնցեսիոների ուղևորափոխադրումների տարեկան վնասների սուբսիդավորման (մասնակի փոխհատուցման) սահմանված ծավալների չափերի վերաբերյալ:
2. Ներհանրապետական փոխադրումներում էլեկտրոնային տոմսավարման կազմակերպման վերաբերյալ:
3. Ուղևորափոխադրումների արդյունավետության և մատուցվող ծառայությունների որակի բարձրացում:
4. 2020-2024թթ. «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի կողմից ներդրումների ծավալների ավելացման հարցը:
5. Ուղևորափոխադրումների համար նոր շարժակազմի ձեռքբերման և արդիականացման հարցը:
6. ՀՀ-ում աշխատանքային խմբի նոր հանդիպում կազմակերպելու հնարավորություն:

7.ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ

Աշխատանքային խմբի կողմից քննարկվեցին քննարկվող թեմաների վերաբերյալ բարձրացված հարցերը:

8. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Ա.Սիմոնյանը և ՌԴ-ում ՀՀ դեսպանը առանձին հանդիպում են ունեցել ՌԴ տրանսպորտի նախարարի տեղակալի և «Ռուսական երկաթուղիներ» ԲԲԸ-ի տեղակալի հետ:

Հանդիպում է կայացել աշխատանքային խմբի անդամների միջև:

9. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

«Ռուսական երկաթուղիներ» ԲԲԸ-ի և «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի կողմից քննարկված հարցերի, երկուստեք ներկայացված առաջարկությունների, մոտեցումների իրագործման վերաբերյալ հիմնավորումները, հաշվարկները գրավոր ներկայացնել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, ինչպես նաև նախապատրաստել նյութեր 2019թ. դեկտեմբերի 2-րդ կեսին ք. Երևանում աշխատանքային խմբի նախատեսվող նիստում քննարկելու համար:

10. ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՄՍԱԹԻՎԸ

11.12.2019թ.